



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՌՈՅԱԼ ՍԹԱՅԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱՌԱՆՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ «ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ» 1950 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի ԹԻՎ 112-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ռոյալ Սթայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումի հիման վրա՝ «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծումը կանոնակարգելու մասին» Կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի թիվ 112-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. 2022 թվականի սեպտեմբերի 29-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «Ռոյալ Սթայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ նաև Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«ՀՀ կառավարության 5 փետրվարի 2015 թվականի N 112-Ն որոշումը՝ դրանով սահմանված ներմուծվող ապրանքների՝ պայմանականորեն բաց թողնված համարվելը

չնախարեսելու մասով ճանաչել ՀՀ սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Դիմողը նշում է, որ վարչական դատարան հայցադիմում է ներկայացրել ընդդեմ պետական եկամուտների կոմիտեի, երրորդ անձ՝ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարություն՝ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության 2016 թվականի հունիսի 15-ի թիվ 0006-Ա արտագնա մաքսային ստուգման ակտը, 2016 թվականի հունիսի 15-ի թիվ 0006-Ո-1 որոշումն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին (թիվ ՎԴ/3865/05/16 վարչական գործ):

Դիմողը հայտնում է, որ թիվ ՎԴ/3865/05/16 վարչական գործով 2017 թվականի մարտի 9-ին վարչական դատարանի կայացրած վճռով իր հայցը բավարարվել է, իսկ վերաքննիչ վարչական դատարանի 2018 թվականի հունիսի 6-ի որոշմամբ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժվել, իսկ վճիռը թողնվել է անփոփոխ: 2019 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերաքննիչ վարչական դատարանի հիշյալ որոշումը բեկանել է և գործն ուղարկել է վարչական դատարան՝ նոր քննության:

Դիմողը հայտնում է, որ հաջորդիվ թիվ ՎԴ/3865/05/16 վարչական գործով 2020 թվականի հոկտեմբերի 10-ի վճռով հայցն ամբողջությամբ մերժվել է, իսկ վերաքննիչ վարչական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ մերժվել է հիշյալ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը: Վերաքննիչ վարչական դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2022 թվականի մարտի 2-ի որոշմամբ վերադարձվել է. Դիմողի կողմից վարչական դատավարությամբ սահմանված ժամկետներում կրկին բողոք չի ներկայացվել:

Դիմողը հայտնում է, որ «Ռոյալ Սթայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում իրականացված արտագնա մաքսային ստուգման արդյունքում 2016 թվականի հունիսի 15-ին կազմվել է վարչական ակտ, համաձայն որի՝ ներմուծված ապրանքներն օգտագործվել են «Կրթական, գիտական և մշակութային բնույթի

նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) պայմաններին չհամապատասխանող նպատակներով՝ խախտելով Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասի պայմանները. Դիմողի նկատմամբ առաջադրվել են սահմանված ժամկետում չվճարված մաքսատուրքի և տույժերի, ավելացված արժեքի հարկի և տույժերի վճարման պահանջներ:

Դիմողը գտնում է, որ ո՛չ Համաձայնագրով ու վերջինիս կից արձանագրությամբ, ո՛չ «Առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծումը կանոնակարգելու մասին» Կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի թիվ 112-Ն որոշմամբ (այսուհետ՝ նաև Որոշում), ո՛չ էլ այլ իրավական նորմով հստակ սահմանված չէ ներմուծողի կողմից նշված ապրանքի օգտագործման պարտադիր նպատակ՝ որպես արտոնությունից օգտվելու պայման, իսկ Որոշման համաձայն՝ բավարար է միայն եզրակացությունն այն մասին, որ ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառվում է Համաձայնագրով սահմանված արտոնությունը, որը և նա ստացել էր:

Դիմողը նշում է, որ թիվ ՎԴ/3865/05/16 վարչական գործի քննության արդյունքում պարզվել է, որ ապրանքը ներմուծելիս մաքսատուրքի վճարումից ազատվելու արտոնության պարտադիր պայման է ներմուծողի կողմից անձամբ Համաձայնագրով նախատեսված նպատակով ներմուծվող ապրանքի օգտագործումը, և հետևաբար՝ ներմուծողի կողմից այդ ապրանքի վերավաճառքի դեպքում արձանագրվել է խախտում:

Ըստ Դիմողի՝ Որոշմամբ արտոնությունից օգտվելու համար նման պայման կամ սահմանափակում առկա չէ, հետևաբար՝ Որոշման մեջ առկա է օրենսդրական բաց, ինչի պատճառով չի ապահովվել արտոնությունից օգտվելու պայմանների և ներմուծված ապրանքների՝ պայմանականորեն բաց թողնված լինելու մասով իրավական որոշակիությունը:

Դիմողը գտնում է, որ Որոշումը՝ «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների՝ որպես պայմանականորեն բաց թողնված ապրանքներ, այսինքն՝ տվյալ դեպքում արտոնությունից օգտվելու համար ներմուծված ապրանքները չվաճառելու պահանջ չնախատեսելու մասով, հակասում է Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներին:

3. Ուսումնասիրելով դիմումը և դրան կից ներկայացված դատական ակտերը, ինչպես նաև ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածների պահանջները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Սահմանադրական դատարան ներկայացված դիմումում Դիմողը նշել է, որ թիվ ՎԴ/3865/05/16 վարչական գործով վերաքննիչ վարչական դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման դեմ ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը վճռաբեկ դատարանի 2022 թվականի մարտի 2-ի որոշմամբ վերադարձվել է, սակայն Դիմողի կողմից սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք կրկին չի ներկայացվել:

Սահմանադրական դատարան ներկայացված դիմումին կցվել է թիվ ՎԴ/3865/05/16 վարչական գործով վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 2022 թվականի մարտի 2-ի որոշումը: Ավելին, www.datalex.am դատական-տեղեկատվական կայքում թիվ ՎԴ/3865/05/16 վարչական գործով առկա տեղեկատվության ուսումնասիրությունից նույնպես հետևում է, որ վճռաբեկ բողոքը վերադարձվելուց հետո այն սահմանված ժամկետում վճռաբեկ դատարան ներկայացնելու վերաբերյալ որևէ տեղեկություն բացակայում է:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 158-րդ հոդվածի պահանջներին:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են այն վարույթ ընդունելու, վերադարձնելու կամ առանց քննության թողնելու հիմքերը:

Թիվ ՎԴ/3865/05/16 վարչական գործի դատավարական նախապատմությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ Դիմողը չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջին

անգամ վճարել բողոքը վերադարձվելուց հետո սխալները չեն շտկվել, և վճարել բողոքը կրկին չի ներկայացվել, ինչի իրավունքը Դիմողն ուներ: Այսինքն՝ Դիմողը չի իրացրել դատական պաշտպանության՝ օրենքով ընձեռված հնարավորությունները, ինչը հանգեցրել է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով դատական պաշտպանության միջոցներն սպառելու պայմանի անտեսման:

Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը, առանց անդրադառնալու սույն դիմումի ընդունելիության մյուս պայմանների հարցին, ենթակա է մերժման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Ռոյալ Սթայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումի հիման վրա՝ «Առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծումը կանոնակարգելու մասին» Կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի թիվ 112-Ն որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

4 նոյեմբերի 2022 թվականի
ՍԴԱՌ-167